

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 7 » նոյեմբերի 2014թ.

N 730-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2015 թվականի բերքի տակ կատարվելիք աշնանացանի աշխատանքների իրականացման նպատակով ձեռքբերվելիք դիզելային վառելանյութի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ սուբսիդավորման գործընթացն ավարտվելուց հետո, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարված աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՈՔԲԵՐՎԵԼԻՔ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՑՈՒԹԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են 2015 թվականի բերքի տակ կատարվելիք աշնանացանի (այսուհետ՝ ցանքս) աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ դիզելային վառելանյութի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) *դիզելային վառելանյութի սուբսիդավորում*՝ ցանքսի իրականացման համար անհրաժեշտ դիզելային վառելանյութի արժեքի մասնակի փոխհատուցում:

2) *դիզելային վառելանյութի սուբսիդավորում միջոցառման մասնակից*՝ դիզելային վառելանյութի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմինները:

II. ՑԱՆՔՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՈՔԲԵՐՎԵԼԻՔ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՑՈՒԹԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Ցանքսի իրականացման նպատակով ձեռքբերվելիք դիզելային վառելանյութի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինները իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկողություն է իրականացնում սուբսիդավորման գործընթացի նկատմամբ:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝ նախարարության սահմանած ժամկետներում նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ նշելով համայնքը կամ պետական պահուստային ֆոնդի հողերը, ցանվող տարածքի մակերեսը և անհրաժեշտ դիզելային վառելանյութի քանակը՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի՝ 1 հեկտարի դիմաց 60 լիտր, պետական պահուստային ֆոնդի հողերի՝ 1 հեկտարի դիմաց 40 լիտր հաշվարկով:

4. Մասնակի սուբսիդավորման ենթակա է ցանքսի իրականացման համար անհրաժեշտ, ձեռքբերվելիք դիզեյային վառելանյութի արժեքը՝ 1 լիտրի դիմաց 100 դրամի չափով:

5. Նախարարությունը, սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ տեղեկություններ է ներկայացնում՝ դիզեյային վառելանյութի պահանջարկի մասին:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը՝ նախարարության կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա ապահովում է դիզեյային վառելիքի ձեռքբերման և բաշխման գործընթացը:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը, դիզեյային վառելիքի ձեռքբերման և բաշխման գործընթացն ավարտելուց հետո, նախարարություն տեղեկություններ է ներկայացնում կատարված աշխատանքների մասին:

8. Նախարարությունը՝ հիմք ընդունելով սույն կարգի 7-րդ կետում նշված տեղեկությունները, իրականացնում է սույն կարգի 4-րդ կետում նշված սուբսիդավորումը՝ 2014 թվականի պետական բյուջեում նախատեսված համապատասխան միջոցներից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ